

ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՐՑԱԽԻՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Կիրակի, 5 մայիս 1991-ին, կէսօրէ ետք ժամը 2-ին խումն քաղաքի մը ներկայ գտնուեցաւ ՌԱԿ-ի Կալիֆոռնիոյ Շրջանային վարչութեան կազմակերպած «Հայաստանը պատերազմական վիճակի մէջ» քաղաքական հաւաքին, որ խորքին մէջ գորակցութեան արտայայտութիւնը մըն էր թէ՛ Արցախի քաջարի ժողովուրդին հերոսական պայքարին եւ թէ՛ Հայաստանի Հանրապետութեան իշխանութեան:

Քաղաքական այս հաւաքին հանդիսավարութիւնը վստահուած էր «Նոր օր» խմբագիր Յակոբ Պօղոսեանին: Դատապարտելի էր Հայաստանը պատերազմի մէջ ներքաշելու կեղծական իշխանութեան եւ Աղբրեջանի անարգ քաղաքականութիւնը, ընկ. Յակոբ Պօղոսեան մանրամասնօրէն նկարագրեց միջնադարեան խաւարամտութեան յատուկ ֆիզիքական ոչընչացման կիրարկուող եղանակները, քանդումները, վայրագութիւնները, որոնք շարունակութիւնն են Սուճայիթով, Բաքուով եւ Խոջալույով սկսած եւ անպատիժ մնացած ցեղասպանութեան:

«Մակայն, ըսաւ հանդիսավարը, եթէ Սուճայիթի եւ Բաքուի շարդերը ծրագրուած էին վերէն, գործադրութիւնը վստահելով ազերիական խուժանին, այս անգամ սովետական բանակն ու ներքին գործոց նախարարութեան յատուկ ստորաբաժանումները անմիջական մասնակցութիւն կը բերեն գնդակոծումներուն եւ զանգուածային տեղահանութեան, յստակօրէն փաստելով, որ Հայաստանի դէմ կը գործադրուէր պետական անարեկչական քաղաքականութիւն մը»:

Բացման խօսքին յաջորդեց ամերիկեան քայլերգի յոտնկայս ունկնդրութիւնը, որմէ ետք, ՌԱԿ-ի կողմէ խօսք առաւ Շրջանային վարչութեան ատենապետ ընկ. Գեորգ Մանտոսեանը:

Խօսք տալէ առաջ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ Ամերիկայի Արեւմտեան ափի առաջնորդ Վաչէ արք. Յովսէփեանին, հանդիսավարն ըսաւ, թէ Հայաստանին պարտադրուած պատերազմական այս վիճակին նայտակն է ոչ միայն լուծարքի ենթարկել Արցախի Ինքնավար Մարզը, այլեւ արգելակել Հայաստանի Հանրապետութեան անկախութեան գործընթացը, իշխանութեան բերելով անընդունելի բռնապետական իշխանութիւն մը:

Վաչէ արք., որ նոր վերադարձած էր Սաքրամենթոյէն, իր ելույթին մէջ տեղեկացուց, թէ հոգեւորական դասին հետ բողոքագիրներ ուղարկած էր նախագահներ Գորբաչովին, Բուշին եւ Միտրանին: «Մարդկային հոգիներու նահատակութիւնն է, որ կը կատարուի Արցախի մէջ», եզրափակեց ան:

Հանդիսավարը հաւաքի մասնակիցները տեղեկ պահեց վերջին իրադարձութիւններուն մասին, այնպէս ինչպէս Երեւանի ՌԱԿ-ի մանուկ գրասենեակէն հաղորդուած էր ժամը ժամին:

ՌԱԿ-ի Արմենական շարժումէն Փանոս Քեչիշեան ներկայացուց բողոքի նամակը, որ ներկաներուն ստորագրութիւններով փոխանցուեցաւ Սան Ֆրանսիսքոյի Սովետական Միութեան հիւպատոսին, յատուկ պատուիրակութեամբ մը:

Խօսք առաւ Հայ-Ամերիկեան Բարեկամութիւն կազմակերպութեան ատենապետ Զարեն Պալեան, որ թուարկելէ ետք սովետական իշխանութեան օրով կատարուած զանգուածային ջարդերը, ըսաւ. «Այսօր, օրհասական այս պահուն, սըփ-խեքի բոլոր կուսակցութիւնները եւ կազմակերպութիւնները պայարտաւոր են»:

ա) Անմիջապէս վերջ տալ ժողովրդավարօրէն ընտրուած Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանը: եւ կառավարութիւնը վարկաբեկելու բոլոր ազգավնաս փորձերուն:

բ) Լիովին եւ գործով թիկունք կանգնել Հայաստանի Հանրապետութեան կառա-

վարութեան, եւ սփիւոքի բոլոր գործողութիւնները համադրել մեր պետութեան գործողութիւններուն հետ:

գ) Արեւմտեան հասարակութիւնը հակնալի եւ ընդունելի միջոցներով (մարդկային իրաւունքներու եւ ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքներու կոպիտ խախտումներու փաստերու մատնանշումով) շարժման մէջ դնել Արեւմուտքի զանգուածային տեղեկատուութեան միջոցները եւ հրապարակային ելույթներով լուսարձակի տակ պահել սովետական ու աղբրեջանական շարդարներուն բռնարարքները: Այս է մեր գլխաւոր զէնքը:

դ) Սփիւոքահայ կազմակերպութիւնները, երկարաժամկէտ ռազմավարութեամբ, պէտք է խորացնեն եւ զարգացնեն բարեկամութիւնը իրենց ապրած երկիրներու ժողովուրդներուն եւ կառավարութիւններուն հետ, որպէսզի անոնք թիկունք կանգնին Հայաստանին եւ հայ ժողովուրդին»:

ԹՄՄ Արշակ Տիգրանեան Վարժարանէն Ազնի Զաւթիկեան եւ Լիզա Մենշեան խոր ապրումով ասումընթացին Յովաննէս Շիրազի «Դանթէական» պոէմէն եւ Վահան Տէրեանի «Երկիր Նայիրի»էն հատուածներ:

Ապա, դարձեալ քեմ հրաւիրուեցաւ ընկ. Փանոս Քեչիշեան, որ այս անգամ ներկայացուց Կալիֆոռնիոյ կառավարիչ Փիթ Ուիլսընին ուղղուած հեռագրին պատճէնը:

Ընկ. Յակոբ Պօղոսեան ընդվզումով արտայայտուեցաւ զօր. Յուրի Շատալինի աթոմակայանը պայթեցնելու սպառնալիքին մասին եւ յայտնեց թէ նման սպառնալիքներու համար անհրաժեշտ է, որպէս քրէական յանցագործ, Շատալինը դատի տալ: Ապա ան կարդաց պատճէնը այն հեռագիրին, որ պիտի ուղարկուի նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին՝ հաւաքի մասնակիցներուն անունով, ուր մասնաւորաբար կ'ըսուի. «Մենք, 5 մայիս 1991-ին Լոս Անջելեսի քաղաքական հանրահաւաքի մասնակիցներս, խոր անձկութեամբ կը հետեւինք Արցախի հերոսական եւ քաջարի ժողովուրդին դէմ նիւթուած դաւադրութեան եւ կը նկատենք, թէ սովետական կեղծական իշխանութիւններուն եւ Աղբրեջանի կառավարութեան յետին նայտակարն է ոչ միայն լուծարքի ենթարկել Արցախի Ինքնավար Մարզը, այլեւ տապալել Հայաստանի ղեկավարական կառավարութիւնը, վերադարձնել բռնատիրական անընդունելի իշխանութիւնը»:

Արցախին եւ Հայաստանին սպառնացող այս վտանգին դիմաց, մենք կուզենք մեր գորակցութիւնը յայտնել ղեկավարական ձեր իշխանութեան հանդէպ եւ հաւաստիացնել, թէ կանգնած ենք ձեր կողքին եւ մեր հնարավորութիւնները ի սպասս պիտի դնենք ի պաշտպանութիւն հայրենի այն վերջին հողաշերտին, որ մեր գոյութեան միակ երաշխիքն է:

Կը խոնարհինք Գեառաշէնի, Մարտունաշէնի, Շահումեանի, Արցախի եւ Հայաստանի հերոսներուն առջեւ, որոնք ուխտած են արեան գնով պաշտպանել հայրենի սրբազան հողը»:

Քաղաքական հաւաքի աւարտին, հանդիսավարը հրաւիրեց Առաջնորդ Սրբազանը, որ հոգեհանգստեան պաշտօն կատարէ հայրենիքի համար զոհուածներու յիշատակին:

Որպէս եզրակացութիւն պէտք է ընդգրծել, թէ ՌԱԿ Շրջանային Վարչութիւնը որոշած է քարոզչական իր մեքենան գործի լծել, ամերիկեան հասարակութիւնը տեղեկ պահելու համար հայ ժողովուրդի ինքնորոշման դէմ նիւթուած դաւադրութեան բոլոր ծալքերուն:

Հաւաքը վերջ գտաւ «Մարդարապատ» երգի յոտնկայս ունկնդրութեամբ: